ՀԱՎԵԼՎԱԾ

156. ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

Ըլում ա, չի ըլո̈ւմ մի հայ թաքավեր ա ըլո̈ւմ։ Սրա̈ն մի ախճիկ ա ըլո̈ւմ՝ անումը Ծովինար։ Մի օր Բաղդադի խալիֆը մարթիք ա ըղարկում Հայաստան։ «Քյընա̈ցեք,— ասում ա,— իմ խարջը հուրուշը հվաքեցե՛ք, պիրե՛ք ամբարներս լըցրե՛ք»։ Հինչ ասեմ, քո̈հնա վախտերը ղայդեն տըհենց ա ըլո̈ւմ՝ վեր թաքավերը զո̈րբա յա ըլո̈ւմ էն մնիցը խարջ վեր ա ունիլս ըլում։

Էտա էտ խալիֆի մարթիքը կ։ա̈լիս են Հայաստան։ Խարջ ու բուրջ են առնում, թալան են անում, հվաքում, պիրում հայի թաքավերի ըմարաթի կուշտը, վեր ընտեղից տանեն Բաղդադ։ Էտ վախտը Ծովինարը բալկոնում կաղնած ա ըլո̈ւմ։ Յա̈շըում են, տեսնում, հի՞նչ ախճիկ. էնքա՜ն սուրո̈ւն, վեր ըրեվին ասում ա. «Տո̈ւ տո̈ւս մի կյա̈, ես եմ տո̈ւս կյըա̈կան»։

Էտ վեր տեսնում են, էս խալիֆի մարթիքը վեր են կենում աթալ-թափալ, տա̈րտա̈կ ու բոշ փրանց քըցըում Բաղդադ։

Խալիֆը հըրցնում ա. «Հը՞, էտ հի՞նչ ա ըլել, էտ խի՞ եք տա̈րտա̈կ ու բոշ եկել, հո՞ւր ա իմ խարջերը»։

Ասում են. «Հի՞նչ խարջ, հի՞նչ բորջ, խարջը հի՞նչ ես անում, խարջը հենց հայի թաքավերի ախճիկն ա, վեր կա։ Նա, վեր քու կընիկը ըլի, ըշխարումս էլ քեզ դա̈րդ չի ըլի»։

Խալիֆը հացից ու ճրից ընգնո̈ւմ ա, քշեր-ցիրեկ մտածում ա, հի՞նչ անի, վե՞նց անի, վեր Ծովինարի տերը տա̈ռնա̈։ Վերջը մարթ ա ըղարկում հայի թաքավերի կուշտը։

— Քյընա̈,— ասում ա,— հայի թաքավերին ասա՛, վեր ես

իրա ըխճկանը ուզում եմ։ Թա տվավ լավ, թա չտվավ էլի լավ. զորք եմ հվաքում, քյընամ տունը-աեղը քանդեմ, քարը հողը վառեմ, մոխիր շինեմ, ըխճկանը պիրեմ։

Էս մարթը վեր ա կենում դուզ քյընում հայի թաքավերի կուշտը. «Եկել եմ խնամխոսի։ Ըխճկանդ խալիֆին պետք ա տաս։ Թա տվիր՝ լավ, թա չտվիր՝ էլի լավ. զորքով-ղենքով կըկանք տունտեղտ կըքանդենք, քարըտ-հողըտ կվառենք, ըխճկանտ կտանենք»։

Հայի թաքավերը մտքի մեչ ա ընդնում։ Քյընում ա ըխճկա կուշտը ասում. «Բաղդադից մարթ ա էկել, քեզ հետի յա էկել։ Խալիֆը քեզ ուզում ա։ Ցա տու պետք ա քյընաս, յա մեր հոդը կըքյնա, կըքանդվի, կերվի, մոխիր կըտանա»։

Ախճիկը մտածում ա հու ասում. «Ես մենակ մի ջան եմ, լավ ա ես քյընամ, կորչեմ, քան թա մեր հողը էրեն, մոխիր շինեն»։

Հերը ըխճկա խոսքը խելքից մոտիկ ա հաշվում, ուդի ա կենում հու խաբարը ըղարկում խալիֆին։ Սա վեր ա կենում. պրոդրաստութուն ա տեսնում, ճամպա ընդնում, կյալիս Հայաստան։

Հայի թաքավերը սուփրա յա պաց անում, տըրան լավ պատիվ ա տալիս, հետը խոշ-բեշ ա անում։ Քեփը վեր լըվանում ա. կանչում ա Ծովինարին ասում. «Պըդրաստվի, էս մարթը քեզ հետի յա եկել, մի էրկու օրից ետը բեզ կտանի Բաղդադ»։

— Էավ,— ասում ա ախճիկը,—մենակ մի պայմանով։ Թող խալիֆը խոստանա, վեր մի բութուն տարի ինձ ձեռք չի տա, իրավունք կըտա, վեր ըրուդու-ըռավնտ տերտերի կուշտը քյընամ. ժամ ասեմ։

Խալիֆը ասում ա. «Ինձ հետի մեծ պարծանք ա հայի փեսա ըլիլը։ Մենակ, վեր էտ անումը իմ վրա ըլի, տա էլ ինձ բոլ ա. ուզում ա յոթ տարի վախտ կըտամ, կուշտը քյընալ չեմ։ Ես հու կընգա մոհտաջ չեմ։ Ես քառասուն կընիկ ունեմ, մինը մնից լավը, մինը մնից սուրուն։ Թող Ծովինարը իրա աղաթով մնա, ես էլ՝ իմ»։

Էքսի օրը Ծովինարը հոր կուշտն ա կյալիս, ասում.— Ըսօր համբարցման օր ա, ուզում եմ ըխճկերանց հետ մեր հանդերում. մեր չոլերում, մեր սարերում մըքիչ ման կյամ։

Հերը ասում ա. «Վենց վեր տու մեր հողին ես ղուրբան ըլում. թող մեր հողն էլ քեզ ղուրբան ըլի. քյընա ման եկ»։

Ծովինարը էտա վեր ա կենում, մի քանի ըխճկա հետ քյընում ա, հըսնում Ախթամար։ Շատ ա ման կյալի թա քիչ, էտ աստված

ա դուդնում, վերչը բըզզըրում ա։ Մի տեղ նստում ա, ասում. «Ըխ-ճըկևք, վեր կըցեք, քյընացեք ման եկե՛ք, ես ուզում եմ մի քիչ դընչանամ»։

Դիմացը Վանա ծովը լափու էր տալիս։ Հենց, վեր ըխճըկեքը քյընում են, Ծովինարը վեր ա կենում, քյընում էտ ծովի ղրաղը։ Ուզում ա ճուր խմի, հնար չի ըլում, ճուրը աղի ա ըլում։ Էտ վախ-տը աստծու խաթրին երքում ա.

Վանա սարեր քար ու քըոա,
Ծարավ սիրտս կըմռմռա.
Ա՜խ երանի քիչ չուր լինեի,
Ես խմեի ծարավըս անցնեի։

Էտ վախտը, աստծո հրամանով, ծովի ղրաղին ընգած քարե-րից մնի միչից ախպուր ա տիւս քըցում։ Ծովինարը իրան քըցում ա էտ ախպուրի վրեն. մի հափուռ ճուր ա խմում, մնել ուզում ա, վեր խմի, ճուրը հափռումը կեսատ ա մնում, ախպուրը ցըմա-քում ա։ Հենց ըստեղ էլ, էտ ճրիցը, Ծովինարը ըրախով ա մնում, ամմա ինքը կըլխի չի ընգնում։ Ըրուգյունը կյալիս ա տուն։

Էքսի օրը խալիֆը վեր ա կենում, զորքը հվաքում, Ծովինա-րին վեր ունում, քյընում Բաղդադ։ Ըստեղ յոթ օր, յոթ քըշեր հըր-սանիք ա անում, փսակվում ա հու իրան խոսքին հաստատ ա մը-նում՝ Ծովինարին մարթութոմ չի անում։

Ժամանակ ա անց կենում, Ծովինարը կլխի ա ընգնում, վեր ըրախով ա, սաքաքն էլ Հայաստանում խըմած ճուրն ա։ Կյալիս ա խալիֆի կուշտը, ըլածը պադմում։ Խալիֆը կանչում ա վազի-րին, խորհուրթ հրցնում։ Վազիրը ասում ա. «Էտ խելքը կըտրիլի պան չի. կա, չկա էտ ախճիկը իրա տերտերից ա ըրախով մնացել։ Իկ տու հրաման տու, թող տրա վիզը կըտրեն»։

Խալիֆը կանչում ա շալլադին, ասում. «Ջյընա էն ղանչըղի վի-զը կտրի՛, լեշը տար էն սարիցը ծորը քըցի»։

Ջալլադը քյընում ա Ծովինարի կուշտը ասում. «Խալիֆը հրա-ման ա տվել, վեր ես քու վիզը կտրեմ։ Եկել եմ, կտրըլական եմ»։

Ըստեղ Ծովինարը իրան կըցնում չի, ասում ա. «Ասենք, թա ես մեղք եմ ըրել. բա էս իմ փորի բըրախեն հի՞նչ մեղք ա ըրել, վեր ուզում էս նրան էլ ըսպանես։ Թա քեզ ընսաֆ, հավատ չու-նե՞ս։ Ես նոր եկած ծունի պես թամուզ եմ, ես մեխք չունեմ, ես ախպուրի ճրից եմ ըրախով մնացել։ Անմեղ տեղը արին չեն ա-նում. թող վախտ տա մինչեվ ազատվեմ։ Հենց վեր ազատվեմ հինչ ուզում ա թող անի»։

էս խոսքի վրա ջա̈լլադը խըխճանում ա, կյա̈լիս խալիֆի կուշտը ասում. «էն ախճիկը երթիմ, հավատ ա ուտում, ասում ա, վեր ինքը անմեղ ա, ախպուրի ճրից ա ըրախով մնացել։ Եկ տու նրան ժամանակ տու, մինչեվ ազատվի»։ Խալիֆը ասում ա. «Լա̈վ, թող քու ասածը ըլի»։

Էտ օրից ժամանակ ա անց կենում։ Ինը ամիսը, ինը օրը, ինը սհաթը վեր թըմամում ա, Ծովինարը շոքում ա, էրկու ղոշ աղա պիրում, մինը թամամ, մինն էլ կեսատ։ Թամամի անումը տընում են Սանասար, կեսատինը՝ Բաղդասար։

Խաբարը տանում են խալիֆին, մըշտըլուղ են ուզում։ Խալիֆը ասում ա. «Ինձ հինչ, նրա̈նք իմ ըրախեքը չեն. նրա̈նք պիճ են»։

Հենց էտ վախտն էլ կանչում ա ջա̈լլադին, ասում. «Էս նըմուտին քյըրնա̈ էն ղանջըղի վիզը կտրի՛»։

Ջա̈լլա̈դը քընում ա Ծովինարի կուշտը ասում. «Խալիֆը՝ հըրաման ա տվել, վեր ես քու վիզը կտրեմ։ Եկել եմ, կտրըլական եմ»։

Ծովինարը ասում ա. «Ես ծծմեր եմ, մընի տեղը հմի էրկու ըրախի եմ կաթ տալի։ Խալիֆը թող իրա ասվածը միտը պիրի՝ ըրընտեր չըտա̈ռնա̈, վախտ տա մինչեվ էս ըրախեքը ծծից կտըրվեն։ Հենց վեր իրանց ումիդը կընգնեն, էն վախտը հինչ ուզում ա թող անի»։

Ջա̈լլա̈դը կյալիս ա խալիֆի կուշտը հու էս խոսքը, վենց վեր լսել ա, պատմում։ Խալիֆը ասում ա. «Լա̈վ, թող էս դոնում էլ նրա̈ ասածը ըլի»։

Ժամանակ ա անց կենում։ Թա ուրիշների ըրախեքը տարիներով են մըծա̈նում, էս Սանասարը հու Բաղդասարը օրերով են մըծա̈նում։ Խալիֆը էս վեր տեսնում ա լըղաճաք ա ըլում։ Ասում ա. «Սրա̈նցից ինձ խաթա յա կըլա̈կան. ջանի կըլխս վրես ա՝ ե՛կ, տու սրա̈նց ռա̈դ ըրա, վեր չասեն՝ թա դոռքագոռը քյըրնա̈ց իբան խելքիցը»։ Մտածում ա, մի հնար ա քըթա̈նում, կյա̈լիս Ծովինարի կուշտը, ասում. «Էս քշեր ըրաղումս Մհա̈մմա̈դ փեյղա̈մբա̈րին եմ տեսել, ասում էր Ծովինարից բըլա̈ծ քու էրկու նոր տղին տար աստծու խաթրին մատաղ ըրա։ Եկել եմ, տանեմ, մատաղ անեմ»։

Ծովինարը ասում ա. «Պա՛հ, քու տունը շինվի. չըկըրացիր ուրիշ պա̈ն մտածե՞ս։ Էլ Ճըմա չկա՞, վեր հնարես։ Աշխարումս իմ տղեքն են մնացել, վեր ուզում ես մատաղ անես։ Թա քեզ մի էրկու վեչխար չունե՞ս, վեր տանես մատաղ անե՞ս, ըմա̈նդա̈ ե՞ս»։

— Չէ՛, չունեմ,— ասում ա խալիֆը,— Մհա̈մմա̈դ փեյղա̈մ-

բարը ինձանից վեչխար չը ուզել, քու էրկու տղին ա ուզել։

— Հինչ անեմ,— ասում ա Ծովինարը,— թող քու ասածը ըլի։ էքուց մատաղ ընիլի օր ա, ե՛կ, վեր կալ, տար հինչ ուզում ես ըրա։

Հենց վեր խալիֆը քյընում ա, Ծովինարը Սանասարին հու Բաղդասարին ասում ա. «Խալիֆը ուզում ա ծեր կըլոխը ուտի, հինչ ճար ունեք տեսեք, վեր կրցեք, փախեք, քյընացեք մեր Հայաստան աշխարը»։

Էսա էս Սանասարը հու Բաղդասարը քըշերվա մի վախտը վեր են կենում, փախճում, քյընում, հըսնում Ախթամար։ Ըստեղ, ըռավետը լիսը պացին Սանասարը իրան քըցում ա Վանա ծովը։ Քրցիլն ու կորչիլը մին ա ըլում։

— Վա՜յ,— ասում ա Բաղդասարը,— իմ ազիզ ախպերը քյընա՜ց, կորա՜վ։

Լաց ա ըլում, վա՜յ ա կանչում, իրան տըփերովն ա տալի. քոմաղ անող չի կյալիս։ Մկել տեսնում ա, վեր ծովիցը ծյի վրա նստած մի մարթ ա տյուս կյալի, վենց վեր մի սար, սարի վրա։ Վախիցը ուզում ա փախճի, էտ ծիյավերը ետնիցն ա ընդնում, կանչում ա. «Բաղդասա՜ը, Բաղդասա՜ր, արա էտ հո՞ւր ես փախճում, փախնիլ մի, ետ տաո, ես քու ախպերն եմ»։

Բաղդասարը ախպոր ծենը ճընանչում ա։ Ետ ա տառնում, կյալիս կուշտը ու զըրմացած կաղնում։

— Բաղդասար,— ասում ա Սանասարը,— էտ խի՞ ես դամբյա կտրել, ճընանչում չե՞ս, քու ախպերն եմ՝ Սանասարը։ Մտա ծովը, վեր լղանամ, էս ծին ռաստ եկավ, ինձ քըցեցի մեչքին։ Ասաց. «Ես Քուռկիկ Ջալալն եմ, քեզ կառնեմ, երգինք կըպցրանամ, աստղերը քեզ կըվառեն, մոխիր կըտառնաս»։ Ըսեցի՝ փորիս տակը կընդնեմ, տու կերվես, մոխիր կըտառնաս։ Ասավ. «Կըտանեմ ծովի տակը, կըխեխտվես, կմեռնես, կըկորչես»։ Ըսեցի՝ ես ճրից եմ սրհամ եկել, ծովը ինձ քյար չի անի. տու կըխեխտվես։ Հվատաց վեչ, տարավ ծովի տակը, հալալ-զուլալ ճրերի մեչը։ Ծրրրվեցի, էտ ճրերից խմեցի, հինչքան խմեցի էնքան ուժ առա, էնքան լենք առա, բոյ քըշեցի, ուժեր հըվքեցի, քըշեցի դուզ ծովից տուս։

Ըստեղ Բաղդասարը ըրխանում, ըշխարովը մին ա ըլում։ Ախպորը ասում ա. «Հմի, էտա վեր տու էտ ուժի տերն ես, մենք շատ պան կանենք։ Ե՛կ, քյընանք Բաղդադ, մեր մորը բդատե՛նք, պիրե՛նք»։

Սանասարը ասում ա. «Դհ̈ըզ ես ասում, ե՛կ, քյընա̈նք»։

Էրկու ախպորով նստում են ծիյի վըրա̈ հու քըշում։ Քըշերվա մի վախտը տեղ են հըսնում, իրանց մորը վեր ունում հու խոդր-րետ։ Վերշը կյա̈լիս են հըսնում Հայաստան։ Տերտերն էլ տըրա̈նց հետ ա ըլ̈ում։ Մի կանանչ տեղ վեր են կյա̈լիս, հաց են ուտում հու ըսկսում զըրուց անիլը։ Ծովինարը ասում ա. «Ծկե՛ք, քյընա̈նք իմ հոր կուշտը, թաքավեր մարթ ա, մեզ տուն կըտա, կապրե՛նք»

Տղեքը ասում են. «Լա̈վը էն ա մենք մեր ծեռովը մեր տունը շինենք, մեր ումիդը մեր վըրա̈ տընենք, ապրենք»։ Մերը ասում ա. «Ռա̈զի եմ»։

Սանասարը վեր ա կենում, էտ տղերքին վա̈րա̈վ̄ուրդ ա ա-նում։ Յաշհ̈ւմ ա, տեսնում, վեր հեռվից մի առու յա կյալիս։ Էտ ճրի համը տեսնում ա հու ասում. «Էս ճ̈ուրը ուրիշ ճ̈ուր ա, էս ճը-րհ̈ւմը ղվաթ կա, եկե՛ք, հենց ըստեղ մեր տունը շինենք»։

Էրկու ախպերով վրա են կյա̈լիս, Քար են պիրում, կիր են պիրհ̈ւմ, էտ առվի ճըրովը ցեխ են անում, տուն են շինում։ Տուն, հի՞նչ տուն. տունը հի՞նչ ա, մի մեծ ղալա են շինում հու հվաք-վում մեջը։ Հմի էլ մտածում են, թե՝ էտ տանը հի՞նչ անում տը-նեն։ Ամեն մինը մի պա̈ն ա ասում։ Վերշը մի սարքին անում չեն քըթա̈նում։

Մի օր մի պառավ մարթ ա կյա̈լիս սըրա̈նց կուշտը։ Սանասարն ու Բաղդասարը էտ մարթին տանում են տուն, հաըց ու փորց են անում, ուզում են գիդան, թա հինչ մարթ ա, վըերդեղի՞ց ա կյա̈-լի, հո՞ւր ա քյըն̈ում։ Էս պառավը ասում ա, վեր ինքը ճամփորթ մարթ ա, աշխար-աշխար ման ա կյա̈լի, կերած-խմած. մի խոս-քով՝ ամեն ինչ տեսած մարթ ա։ Սանասարը ասում ա. «Էտ շատ լա̈վ ա, վեր դ̈ուք աշխար տեսած մարթ եք։ Էս տունը մենք նոր ենք շինել, ուզում ենք մի անում տընենք, կըլ̄ոխ չենք հանում, բալքի դ̈ու մեզ ք̄ոմա̈գ ըլես»։ Էս պառավը վեր ա կենում, տհ̈ւս կյա̈լի, տանը յա̈շում ղըրմանում։

— Վա՜հ,— ասում ա,— էս հի՞նչ զոռբա մարթիք եք, էս սա-սում, էս հյվարա քարերը վե՞նց էք էս պատերի վրա̈ պըցըրցրել։

Սանասարը ասում ա. «Տեր օրհնած, լա̈վ քըթա̈ր, ըսօրվա̈նից էս տեղի անումը Սասուն ենք տըն̈ում»։

Էքսի օրը լ̄ուսը պա̈ցվում ա հետն էլ պարվին։ Էս պառավը վեր ա կենում, Սանասարին ու Բաղդասարին օխնում հու ճամփա ընգ-ն̈ում, էտ օրից շատ ա անց կենում, թա քիչ, էտ աստված ա դ̄ու-դ̄ում, էս պառավը հըսնում ա Ջինմաշին։

Ջինմաչինի թաքավերին մի սիրուն, շարմաղ ախճիկ ա ըլում։ Էս պառավը մի հնար ա մըտածում, քյընում էտ ըխճկա կուշտը։ Իրան տեսած հու լսածը պադմում ա, վերչը կյալիս, հըսնում Սանասարին հու Բաղդասարին։ Թա Բաղդասարին մին ա կյովում, Սանասարին հազար ու մին ա կյովում, կրակը քըցում թաքավերի ըխճկա սիրտը, տուս կյալի, քյընում։

Էտ օրվանից թաքավերի ախճիկր քունը կըրցնում ա։ Վերչը մի նամակ ա կյրրում, տալի մի ղուշի, ասում. «Էս նամակը կըտանես, կըտաս Սանասարին՝ իմ սրտով սիրած յարին»։ Էս ղուշը նամակը վեր ա ունում, օխտը սարի վրենով, օխտը ծովի վրենով, թռչում, պիրում, տալիս Սանասարին։ Սա՜ նամակը կարթում ա հու մտքի մեչ ընդնում։ Վերչը վեր ա կենում, ախպորը վեր ունում հու ճամփա ընդնում, քյընում, հըսնում Ջինմաչին թաքավերի քաղաքը։ Ըստեղ Սանասարը մարթ ա ըղարկում թաքավերի կուշտը խնամխոսի։ Թաքավերը ասում ա. «Ըռա՜ղի եմ։ Իմ ըխճկա վրա՜ օխտանասուն փահլվան ղարավուլ են կաղնած, հով նրանց հաղթի՝ ախճիկը նրա՜նն ա»։ Սանասարը ասում ա. «Լա՜վ, ռա՜ղի եմ»։ Նստում ա Քուռկիկ Ջալալին հու մեյդան տուս կյալիս։ Ըռաչի օրը Սանասարի վրա՜ տասը փահլվան են կյալի, տասին էլ կըտորում ա, մեյիդները փռում։ Էքսի օրը քսանն են կյալի. սրա՜նց էլ ա կըտորում։ Մրնում են քառասունը։ Բաղդասարը ասում ա. «Ախպե՛ր, եկ էտ փահլվաններից ձեռք քաշի, վախում եմ քեզ մի ինաս կյա՜. ըշխարումս հի՞նչ ա բոլ՝ ախճիկը, ե՛կ, քյընա՜նք մեր հալալ հացին»։

Սանասարը ասում ա. «Էշը նստիր մի այիր, վեր կյա՜յն էլ էրկու այիր։ Վերդեղ սեր, ընտեղ տեր։ Ես էն ըխճկա նամակը կըրթացել եմ. պատկերը տեսել, եկել Ջինմաչին եմ հըսել։ Ես ըստեղից դատարկ քյընա՜ցողը չեմ»։

Էքսի օրը քառասուն փահլվանը ըլղապատառ ըլած քյընում են թաքավերի կուշտը ասում. «Էս Սանասարը շատ զորեղ մարթ ա ըրեվում, ուզում ենք քառասունով նրա հախից կյա՜նք»։ Թաքավերը ասում ա. «Լա՜վ եք մտածել, քյընա՜ցեք, հինչ հունա՜ր ունեք, ըռնորեք»։

Քառասուն փահլվանը տուս են կյա՜լիս մեյդան։ Սանասարն էլ ա տուս կյա՜լիս մեյդան, ընգնում ա սրանց մեչը։ Վերին փնքը. մերին ծեր՝ կըտորում են. մեռում մնում են տասը։ Սանասարի վրա էլ հարա՜քա՜թ չի մնում։ Բաղդասարը էս վեր տեսնում ա.

ախպորը ասում ա. «էն մեր ճրիցը մի կուժ հետս պիրել եմ, ե՛կ խմի, մի քիչ նափաս առ, նոր կըքյընաս, կըկովեսա»։

Սանասարը կյալիս ա ախպոր կուշտը, կուժը կըլխին քաշում, մի կուշտ խմում։ Հենց վեր խմում ա պըրծնում, իրա ուժը էլի ետ ա ըստանում, նըստում ա ծին հու ընգնում էտ փահլվանների մեջը, լոխին էլ մեյիդ անում, փռում։

Ըրուգյունը ժամըժանքին էրկու ախպորով կյալիս են Թաքավերի պալատը։ Սանասարը ասում ա. «Թաքավերը հաստատ կենա, խոսքն էլ հետը։ Ծկել ենք, ախճիկտ տուր, տանենք»։

Թաքավերը ասում ա. «Ըսիլի պան չունեմ, իմ ախճիկը քեզ հալալ ա, վեր կալ տա՛ր»։

Սանասարը վեր ա կենում Բաղդասարի հետ ըխճկանը վեր ունում կյալիս տուն։ Լավ հըրսանիք են անում, փսակվում, տընըվերվում։ Մի քանի տարից ետքը Սանասարին էրկու ղոչ տղա յա ըլում. մեծի անումը տնում են՝ Մհեր, կրտսերինը՝ Ծենով Հովան։